Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Նոնա Բուդոյան
   Լուսինե Ավետիսյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կլիմայական քաղաքականության վարչության պետ
   Ռազմավարական քաղաքականության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Այցելություն Կորեայի Հանրապետություն՝ 2023 թվականի 24-ից 28-ը հոկտեմբերի.
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Հարավային Կորեայի շրջակա միջավայրի նախարարություն և Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողով (ESCAP)
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն Կանաչ աճի վերաբերյալ Սեուլի նախաձեռնող ցանցի «Կլիմայական գործողությունների արագացումը Ասիայում և Խաղաղ օվկիանոսում» խորագիրը կրող 18-րդ քաղաքական խորհրդատվական ֆորումին:

Հանդիպումը միտված էր կլիմայական գործողությունների արագացման նպատակով համագործակցության նոր հնարավորությունների բացահայտմանը, ընդլայնմանը, տեսակետների և փորձի փոխանակմանը: Դա հարթակ էր երկրների համար՝ լավագույն փորձը քննարկելու, փորձի փոխանակման և կլիմայի փոփոխությանն արձագանքելու համագործակցային ջանքերը ամրապնդելու համար՝ նպատակ ունենալով հասնել կլիմայական չեզոքության մինչև 2050 թվականը: Ածխածնային չեզոքության հասնելու համար երկարաժամկետ ռազմավարությունների մշակումը երկրների կողմից նախատեսված է Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածով, ինչը սահմանում է, որ Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմ երկրները պետք է ջանան ձևակերպել և ներկայացնել ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարություն՝ հաշվի առնելով նրանց ընդհանուր, սակայն տարբերակված պատասխանատվությունը և համապատասխան կարողությունները:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   - Ասիայի և Խաղաղ օվկիանոսյան երկրների կլիմայական գործողությունների լավագույն փորձի ներկայացում,

- կլիմայական գործողությունների արագացում կայուն զարգացման համար թեմատիկ քննարկում,
- կլիմայական գործողությունների ազգային ռազմավարության ներկայացում
- ածխածնային չեզոքության և կլիմայական գործողությունների հարթակի ներկայացում,
- անտառների ածխածնի պաշարի կառավարման ռազմավարությունները և քաղաքականությունը թեմայով քննարկում,
- կլիմայական գործողությունների համագործակցությունը Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների միջև,
- կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման համակարգի ներդրման և շահագործման առկա կարգավորումների ներկայացում,
- հարմարվողականության և կլիմայական դիմակայունության բարելավման լավագույն փորձի ներկայացում
- միջազգային համագործակցային ծրագրեր՝ միտված արագացնելու կլիմայական գործողությունները և կանաչ աճը
- կլիմայական գործողությունների և կանաչ աճի ֆինանսական աջակցության ծրագրերի ներկայացում,
- կլիմայական խնդիրների լուծման լավագույն փորձն ու քաղված դասերի ներկայացում Ասիայում,
- ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը հասնելու համար մեղման գործողությունների իրականացման մեխանիզմները:

**7. Հանդիպումները, ելույթները.**

Հանդիպմանը որպես բանախոս Նոնա Բուդոյանը հանդես է եկել «Կլիմայական չեզոքություն ձգտելու համար «Հայաստանում իրականացվող ծրագրերը և ոլորտային քաղաքականությունների դերը» ներկայացումով (պրեզենտացիայով): Մասնավորապես անդրադարձել է Հայաստանի Ազգային մակարդակով սահմանված գործողություններին (ԱՍԳ), (2021-2030թ. արտանետումները 1990թ. -ի համեմատ անվերապահորեն կրճատել 40%-ով, այս թիրախին Հայաստանը պետք է հասած լինի 2030թ. -ին), իրականացված միջոցառումներին՝ ԱՍԳ սահմանված թիրախն իրականություն դարձնելու համար: Նշել է, որ Հայաստանի ԱՍԳ 2021-2030-ի իրագործումը ապահովվում են ոլորտային ռազմավարությունները և դրանց իրականացման ծրագրերը ինչպես նաև նշել է, որ Հայաստանը մտադրված է մասնակցել Փարիզյան Համաձայնագրի 6-րդ հոդվածի ներքո շուկայական և ոչ շուկայական մեխանիզմներին: Ներկայացրել է, որ Հայաստանը մտադրված է մինչև 2050 թվականը հասնել կլիմայական չեզոքության: Նշված թիրախը ամրգրված է Կառավարության 2021 թվականի 610-Լ որոշմամբ, մասնավորապես երկարաժամկետ կտրվածքով նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները մինչև 2.07 տ $CO_2$ համարժեք մեկ շնչի հաշվով՝ մինչև 2050 թվականը:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Երկկողմ հանդիպում է կայացել Կանաչ աճի վերաբերյալ Սեուլի նախաձեռնողական ցանցի ղեկավարի, Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի բնապահպանական հարցերով վարչության պետի, Կորեայի բնապահպանական համագործակցության ղեկավարի, Կորեայի Հանրապետության շրջակա միջավայրի

երկկողմ հանդիպում է կայացել Կանաչ աճի վերաբերյալ Սեուլի նախաձեռնողական ցանցի ղեկավարի, Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի բնապահպանական հարցերով վարչության պետի, Կորեայի բնապահպանական համագործակցության ղեկավարի, Կորեայի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության աշխատակիցների հետ: Քննարկվել է աղբի տեսակավորման, վերամշակման գործընթացներում Հարավային Կորեայի Հանրապետության առաջավոր փորձը, մասնավորապես պլաստիկ և օրգանական թափոնների վերամշակման ոլորտում: Օրգանական թափոնները հանդիսանում են ջերմոցային գազի առաջացման աղբյուր և Հայաստանում կազմում են ընդհանուր արտանետումների 5%-ը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Կազմակերպիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը և կարիքները ձևակերպելուց հետո կապ հաստատել, հաշվի առնելով այն, որ Կանաչ աճի վերաբերյալ Սեուլի նախաձեռնողական ցանցը հավատարմագրված է Կանաչ կլիմայի հիմնադրամին և ունի մեծ հնարավորություններ աջակցելու երկրներին՝ իրենց կլիմայական հանձնառությունները կատարելու համար:

*Գործուղվողներ* *Նոնա Բուդոյան* *Լուսինե Ավետիսյան* *22.12.2023*